ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 15.10.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2021/243

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ
Մասնակից՝ «Նովա թրեյդ» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
«Նովա թրեյդ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Ա. Պարանյանի,

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-116/21» գնանշման հարցման ընթացակարգ, գործիքային հատուկ հարմարանքների ձեռքբերում

Պայմանագրի ծածկագիրը՝ «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-116/21-01/207»:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ), ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 14.09.2021թ.-ի թիվ 26/26-1/14841-2021 գրությամբ «Նովա թրեյդ» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք

չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. <u>Գործի նախապատմությունը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի 08.09.2021թ.-ի թիվ Ե/13/2377-21 գրության հիման վրա, 14.09.2021թ.-ին «Նովա թրեյդ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձին գործը մակագրվել է 14.09.2021թ.-ին:

15.09.2021թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ՍՑ-ԼՕ-2021/243 համարի ծածկագիրը:

28.09.2021թ.-ին և 14.10.2021թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 28.09.2021թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 14.10.2021թ.-ին:

2. <u>«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.</u>

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ն 08.09.2021թ.-ի թիվ Ե/13/2377-21 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը հայտնելով հետևյալը.

«Գործիքային հատուկ հարմարանքներ» ապրանքների ձեռքբերման նպատակով ս/թ հունիսի 15-ին հրապարակված «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-116/21» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում «ՆՈՎԱ ԹՐԵՅԴ» ՍՊԸ-ի և «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի միջև 2021թ. հուլիսի 28-ին կնքվել է № ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-116/21-01/207 պայմանագիրը, որը «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կողմից միակողմանի լուծվել է, քանի որ «ՆՈՎԱ ԹՐԵՅԴ» ՍՊԸ-ի կողմից ապրանքը չի մատակարարվել:

«ՆՈՎԱ ԹՐԵՅԴ» ՍՊԸ-ն 10.08.2021թ. և 31.08.2021 թ դիմել է «ՀԱԷԿ» ՓԲԸ պայմանագրի մատակարարման ժամկետը երկարաձգելու խնդրանքով, սակայն պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետը «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կողմից չի երկարաձգվել (Ե/13/2141-21 առ 13.08.2021թ. և Ե/13/2342-21 առ 02.09.2021 թ գրություններ):

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետի ա. պարբերության դրույթներով և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն Որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 45-րդ կետը, Ձեզ ենք ներկայացնում վերը նշված փաստաթղթերի պատճենները:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացվել է «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-116/21» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի շրջանակներում «Նովա թրեյդ» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

3. <u>«Նովա թրեյդ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 08.09.2021թ.-ին գրությամբ դիմել է «Նովա թրեյդ» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 14.09.2021թ.-ի թիվ 26/26-1/14841-2021 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը, ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով հրավիրված նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստերին:

Մասնակիցը, 28.09.2021թ.-ին ներկայացնելով նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ գրավոր դիրքորոշում, հայտնել է հետևյալը.

««Նովա Թրեյդ» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2021/243 ընթացակարգի հիմքերի վերաբերյալ ներկայացվում են հետևյալ նկատառումները.

«Հայաստանի ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կարիքների համար հայտարարվել է «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-116/21» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցության հայտ է ներկայացրել նաև «Նովա Թրեյդ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի արդյունքում «Հայաստանի ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի և «Նովա Թրեյդ» ՍՊԸ-ի միջև 2021թ. հուլիսի 28-ին կնքվել է «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-116/21-01/207» ծածկագրով պայմանագիր:

Պայմանագրի 1.1. կետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 Հավելվածով տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացուցով նախատես-ված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրի 2.1.7. կետի համաձայն՝ Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը /լրիվ կամ մասնակի/, եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 կետի համաձայն՝ Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

բ. Ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրացուցային օրից ավելի:

Պայմանագրի 8.6 կետի համաձայն՝ ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ միչև 30օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանգրով սահմանված ժամկետն է:

«Նովա Թրեյդ» ՍՊԸ-ն 10.08.2021թ. դիմել է «Հայաստանի ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ին (գրության պատճենը և ուղարկելու փաստը հավաստող ապացույցը կցվում է)՝ հայտնելով հետևյալը.

««Հայաստանի ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի և «Նովա Թրեյդ» ՍՊԸ-ի միջև 2021թ. հուլիսի 28-ին կնքվել է «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-116/21-01/207» ծածկագրով պայմանագիր, որով մատակարարման ժամկետ է սահմանվել պայմանագիրը կնքելուց հետո 30 օր:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ արտադրող գործարանի մոտ եղել են արտադրական հոսքերի տեխնիկական խնդիրներ խմբաքանակի մատակարարումը կարող է ուշանալ 25 օր, խնդրում ենք նշված պայմանգրի մատակարարման ժամկետը օրենքով սահմանված կարգով երկարաձգել 25 օրացուցային օրով:»

«Հայաստանի ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ն 13.08.2021թ. ի պատասխան վերը նշված գրության հայտնել է (գրության պատճեն կցվում է), որ ապրանքի մատակարարման ժամկետները չի երկարաձգվի և միաժամանակ տեղեկացրել է, որ պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարման ժամկետների խախտման դեպքում «Նովա Թրեյդ» ՍՊԸ-ի նկատմամբ կկիրառվի պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

«Նովա Թրեյդ» ՍՊԸ-ն 30.08.2021թ. կրկին դիմել է «Հայաստանի ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի հայտնելով հետևյալը.

«Ցանկանում ենք տեղեկացնել, որ 19.07.2021թ. մեր կողմից արդեն իսկ կատարվել է 50 տոկոս կանխավճար՝ 768,450 ռուբլու չափով, «Պոռիզվոդստվենոե պրեդպրիյատիե ԿՕՆՍՏԱՌ» ՍՊԸ-ին «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-116/21-01/207» ծածկագրով պայմանագրով նախատեսված ապրանքների արտադրական պրոցեսը գործելու համար: Եվս մեկ անգամ խնդրում ենք վերանայել Ձեր առ 13.08.2021թ. Ե-13/2141-21 «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-116/21-01/207» ծածկագրով պայմանագրի կատարման վերաբերյալ գրությունը մատակարարման ժամկետի երկարաձգման համար, վերջինիս անհնարինության դեպքում մենք պատրաստ ենք վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժերը, ինչպես և նշված է Ձեր պատասխան գրության մեջ:

Եվս մեկ անգամ ցանկանում ենք տեղեկացնել Ձեզ, որ արտադրական պրոցեսը տևում է փ-ջ ամիս, սակայն մի քանի օր բանակցությունների արդյունքում մեզ հաջողվել է պայմանավորվել, որ արտադրողը մեզ տրամադրի ապրանքները 3 ամիս ժամկետում:

Սույն գրությանը կից ներկայացնում եմ միջազգային վճարման հանձնարարագիրը և արտադրող կազմակերպության կողմից արտադրման ժամկետների մասին պաշտոնական գրությունը (վերոհիշյալ փաստերը հավաստող ապացույցները կվում են սույն դիրքորոշմանը):

Ինչպես նաև խնդրում եմ կազմակերպել համատեղ քննարկում:»

Սակայն, «Նովա Թրեյդ» ՍՊԸ-ին ուղղված 08.09.2021թ. թիվ Ե/13/2370-21 գրությամբ (կցվում է) «Հայաստանի ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ն նշված պայմանագիրը միակողմանի լուծել է՝ հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 կետի բ ենթակետը:

Այնուհետև, «Հայաստանի ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ն, ղեկավարվելով ՀՀ կառավա-րության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 45-րդ կետի պահանջներով, ՀՀ ֆինանսների նախարարությանը ուղղված գրությամբ ներկայացրել է «Նովա Թրեյդ» ՍՊԸ-ի վերաբերյալ տեղեկատվություն՝ վերջինիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով պաշտոնական ընթացակարգ նախաձեռնելու համար:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետնաև՝Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Ինչպես արդեն նշել ենք՝ «Հայաստանի ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կարիքների համար հայտարարվել է «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-116/21» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցության հայտ է ներկայացրել նաև «Նովա Թրեյդ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի արդյունքում «Հայաստանի ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի և «Նովա Թրեյդ» ՍՊԸ-ի միջև 2021թ. հուլիսի 28-ին կնքվել է «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-116/21-01/207» ծածկագրով պայմանագիր:

Պայմանագրի 1.1. կետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 Հավելվածով տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացուցով նախատես-ված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրի 2.1.7. կետի համաձայն՝ Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը /լրիվ կամ մասնակի/, եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 կետի համաձայն՝ Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

բ. Ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրացուցային օրից ավելի:

Պայմանագրի 8.6 կետի համաձայն՝ ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել միչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ միչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանգրով սահմանված ժամկետն է:

«Նովա Թրեյդ» ՍՊԸ-ն 10.08.2021թ. դիմել է «Հայաստանի ատոմային էլեկտրական» ՓԲԸ-ի հայտնելով հետևյալը.

««Հայաստանի ատոմային էլեկտրական» ՓԲԸ-ի և «Նովա Թրեյդ» ՍՊԸ-ի միջև 2021թ. Հուլիսի 28-ին կնքվել է «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-116/21-01/207» ծածկագրով պայմանագիր, որով մատակարարման ժամկետ է սահմանվել պայմանագիրը կնքելուց հետո 30 օր:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ արտադրող գործարանի մոտ եղել են արտադրական հոսքերի տեխնիկական խնդիրներ խմբաքանակի մատակարարումը կարող է ուշանալ 25 օր, խնդրում ենք նշված պայմանգրի մատակարարման ժամկետը օրենքով սահմանված կարգով երկարաձգել 25 օրացուցային օրով:»

«Հայաստանի ատոմային էլեկտրական» ՓԲԸ-ն 13.08.2021թ. ի պատասխան վերը նշված գրության հայտնել է, որ ապրանքի մատակարարման ժամկետները չի երկարաձգվի և միաժամանակ տեղեկացրել է, որ պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարման ժամկետների խախտման դեպքում «Նովա Թրեյդ» ՍՊԸ-ի նկատմամբ կկիրառվի պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

«Նովա Թրեյդ» ՍՊԸ-ն 30.08.2021թ. կրկին դիմել է «Հայաստանի ատոմային էլեկտրական» ՓԲԸ-ի հայտնելով հետևյալը.

«Ցանկանում ենք տեղեկացնել, որ 19.07.2021թ. մեր կողմից արդեն իսկ կատարվել է 50 տոկոս կանխավճար՝ 768,450 ռուբլու չափով, «Պոռիզվոդստվենոե պրեդպրիյատիե ԿՕՆՍՏԱՌ» ՍՊԸ-ին «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-116/21-01/207» ծածկագրով պայմանագրով նախատեսված ապրանքների արտադրական պրոցեսը գործելու համար: Եվս մեկ անգամ խնդրում ենք վերանայել Ձեր առ 13.08.2021թ. Ե-13/2141-21 «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-116/21-01/207» ծածկագրով պայմանագրի կատարման վերաբերյալ գրությունը մատակարարման ժամկետի

երկարաձգման համար, վերջինիս անհնարինության դեպքում մենք պատրաստ ենք վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժերը, ինչպես և նշված է Ձեր պատասխան գրության մեջ:

Եվս մեկ անգամ ցանկանում ենք տեղեկացնել Ձեզ, որ արտադրական պրոցեսը տևում է փ-ջ ամիս, սակայն մի քանի օր բանակցությունների արդյունքում մեզ հաջողվել է պայմանավորվել, որ արտադրողը մեզ տրամադրի ապրանքները 3 ամիս ժամկետում:

Սույն գրությանը կից ներկայացնում եմ միջազգային վճարման հանձնարարագիրը և արտադրող կազմակերպության կողմից արտադրման ժամկետների մասին պաշտոնական գրությունը:

Ինչպես նաև խնդրում եմ կազմակերպել համատեղ քննարկում:»

Սակայն, «Նովա Թրեյդ» ՍՊԸ-ին ուղղված 08.09.2021թ. թիվ Ε/13/2370-21 գրությամբ «Հայաստանի ատոմային էլեկտրական» ՓԲԸ-ն նշված պայմանագիրը միակողմանի լուծել է՝ հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 կետի բ ենթակետը:

Գտնում ենք, որ Պատվիրատուն խախտել է գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ և Պայմանգրի 8.6 կետով սահմանված դրույթները, մասնավորապես Պայամանագրի 8.6 կետով հստակ ամրագրված է, որ ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ միչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանգրով սահմանված ժամկետն է: Սակայն տվյալ պարագայում «Հայաստանի ատոմային էլեկտրական» ՓԲԸ-ն առանց որևէ մեկնաբանման, առանց հիմնավորման, մերժել է Ընկերության մատակարարման ժամկետը Պայմանագրով սահմանված կարգով 25 օրացուցային օրով երկարաձգելու խնդրանքը:

Բողոքներ քննող անձին խնդրում ենք հաշվի առնել «Նովա Թրեյդ» ՍՊԸ-ի բարեխղճությունը, որը մինչև պայմանարի ժամկետը լռանալը ձեռնարկել է բոլոր միջոցները պայմանագիրը պատշաճ կատարելու համար, արտադրող ընկերությանը վճարել պայմանագրով նախատեսված ապրանքի 50 տոկոսի կանխավճարը և բազմաթիվ անգամ դիմել Պատվիրատուին՝ պայմանագրով նախատեսված ժամկետը երկարաձգելու խնդրանքով, որպեսզի հասցնի մատակարարել պայմանագրով նախատեսված ապրանքը, որը ըստ էության, ուշացել է ոչ իր մեղքով: Վերոհիշյալ փաստերը ապացուցվում են թե՛ ՍՊԸ-ի և Պատվիրատուի փոխադարձ գրագրությամբ, թե՛ միջազգային փոխանցման փաստաթղթերով և թե՛ արտադրող ընկերության գրությամբ:

Սակայն ինչպես արդեն նշել ենք, Պատվիրատուն առանց հիմնավորման մերժել է «Նովա Թրեյդ» ՍՊԸ-ի պայմանագրի ժամկետը երկարացնելու առաջարկը՝ դրանով իսկ

վերջինիս հասցնելով թե՛ նյութական վնաս (ապրանքի դիմաց վճարված կանխավճարի կորստի տեսքով) և թե՛ կանգնեցնելով Ընկերությանը պետական գնումներին մասնակցելու իրավունքից զրկելու վտանգի առջև:

Ելնելով վերոնշված փաստերից ու փաստական հանգամանքներից, խնդրում ենք «Նովա Թրեյդ» ՍՊԸ-ին չվերագրել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պայմանագրային պարտավորության խախտում, և վերջինիսի չներառել «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում»:»:

Ի լրումն վերոնշյալ դիրքորոշման, Մասնակիցը 01.10.2021թ.-ի գրությամբ հայտնել է հետևյալը.

««Նովա Թրեյդ» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2021/243 ընթացակարգի հիմքերի վերաբերյալ ներկայացվում են հետևյալ լրացուցիչ նկատառումները.

Ինչպես արդեն հայտնել ենք.

«Հայաստանի ատոմային էլեկտրական» ՓԲԸ-ի և «Նովա Թրեյդ» ՍՊԸ-ի միջև 2021թ. հուլիսի 28-ին կնքվել է «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-116/21-01/207» ծածկագրով պայմանագիր:

«Նովա Թրեյդ» ՍՊԸ-ն 10.08.2021թ. դիմել է «Հայաստանի ատոմային էլեկտրական» ՓԲԸ-ին՝ հայտնելով հետևյալը.

««Հայաստանի ատոմային էլեկտրական» ՓԲԸ-ի և «Նովա Թրեյդ» ՍՊԸ-ի միջև 2021թ. հուլիսի 28-ին կնքվել է «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-116/21-01/207» ծածկագրով պայմանագիր, որով մատակարարման ժամկետ է սահմանվել պայմանագիրը կնքելուց հետո 30 օր:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ արտադրող գործարանի մոտ եղել են արտադրական հոսքերի տեխնիկական խնդիրներ խմբաքանակի մատակարարումը կարող է ուշանալ 25 օր, խնդրում ենք նշված պայմանգրի մատակարարման ժամկետը օրենքով սահմանված կարգով երկարաձգել 25 օրացուցային օրով:»

«Հայաստանի ատոմային էլեկտրական» ՓԲԸ-ն 13.08.2021թ. ի պատասխան վերը նշված գրության հայտնել է, որ ապրանքի մատակարարման ժամկետները չի երկարաձգվի և միաժամանակ տեղեկացրել է, որ պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարման ժամկետների խախտման դեպքում «Նովա Թրեյդ» ՍՊԸ-ի նկատմամբ կկիրառվի պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

«Նովա Թրեյդ» ՍՊԸ-ն 30.08.2021թ. կրկին դիմել է «Հայաստանի ատոմային էլեկտրական» ՓԲԸ-ի հայտնելով հետևյալը.

«Ցանկանում ենք տեղեկացնել, որ 19.07.2021թ. մեր կողմից արդեն իսկ կատարվել է 50 տոկոս կանխավճար՝ 768,450 ռուբլու չափով, «Պոռիզվոդստվենոե պրեդպրիյատիե ԿՕՆՍՏԱՌ» ՍՊԸ-ին «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-116/21-01/207» ծածկագրով պայմանագրով նախատեսված ապրանքների արտադրական պրոցեսը գործելու համար: Եվս մեկ անգամ խնդրում ենք վերանայել Ձեր առ 13.08.2021թ. Ե-13/2141-21 «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-116/21-01/207» ծածկագրով պայմանագրի կատարման վերաբերյալ գրությունը մատակարարման ժամկետի երկարաձգման համար, վերջինիս անհնարինության դեպքում մենք պատրաստ ենք վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժերը, ինչպես և նշված է Ձեր պատասխան գրության մեջ:

Եվս մեկ անգամ ցանկանում ենք տեղեկացնել Ձեզ, որ արտադրական պրոցեսը տևում է 3-5 ամիս, սակայն մի քանի օր բանակցությունների արդյունքում մեզ հաջողվել է պայմանավորվել, որ արտադրողը մեզ տրամադրի ապրանքները 3 ամիս ժամկետում:

Սույն գրությանը կից ներկայացնում եմ միջազգային վճարման հանձնարարագիրը և արտադրող կազմակերպության կողմից արտադրման ժամկետների մասին պաշտոնական գրությունը (վերոհիշյալ փաստերը հավաստող ապացույցները կվում են սույն դիրքորոշմանը):

Ինչպես նաև խնդրում եմ կազմակերպել համատեղ քննարկում:»

Սակայն, «Նովա Թրեյդ» ՍՊԸ-ին ուղղված 08.09.2021թ. թիվ Ե/13/2370-21 գրությամբ «Հայաստանի ատոմային էլեկտրական» ՓԲԸ-ն նշված պայմանագիրը միակողմանի լուծել է՝ հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 կետի բ ենթակետը:

Այնուհետև, «Հայաստանի ատոմային էլեկտրական» ՓԲԸ-ն, ղեկավարվելով ՀՀ կառավա-ության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 45-րդ կետի պահանջներով, ՀՀ ֆինանսների նախարարությանը ուղղված գրությամբ ներկայացրել է «Նովա Թրեյդ» ՍՊԸ-ի վերաբերյալ տեղեկատվություն՝ վերջինիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով պաշտոնական ընթացակարգ նախաձեռնելու համար:

Այս ողջ ընթացքում «Նովա Թրեյդ» ՍՊԸ-ն՝ մինչև պայմանագրի ժամկետը լրանալը ձեռնարկել է բոլոր միջոցները պայմանագիրը պատշաճ կատարելու համար, արտադրող ընկերությանը վճարել պայմանագրով նախատեսված ապրանքի 50 տոկոսի կանխավճարը

և բազմաթիվ անգամ դիմել Պատվիրատուին՝ պայմանագրով նախատեսված ժամկետը երկարաձգելու խնդրանքով, որպեսզի հասցնի մատակարարել պայմանագրով նախատեսված ապրանքը, որը ըստ էության, ուշացել է ոչ իր մեղքով /բոլոր ապացույցները ներկայացվել են դիրքորոշման հետ/:

Ավելին ապրանքատեսակը ստանալուն պես, այն է՝ 07.09.2021թ. 09:40-ին ՍՊԸ-ն համապատասխան ծառայության միջոցով /ապացույցները կցվում են/ «Հայաստանի ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ին է ներկայացրել պայմանագրով նախատեսված բոլոր ապրանքները, որը մինչև 07.09.2021թ. ժամը 16:00-ն եղել է պահակակետում, սակայն «Հայաստանի ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ն այդպես էլ վերը նշված ապրանքները չի ընդունվել:

Սակայն ինչպես արդեն նշել ենք, Պատվիրատուն առանց հիմնավորման մերժել է «Նովա Թրեյդ» ՍՊԸ-ի պայմանագրի ժամկետը երկարացնելու, ինչպես նաև ապրանքը ընդունելու առաջարկը՝ դրանով իսկ վերջինիս հասցնելով թե՛ նյութական վնաս (ապրանքի դիմաց վճարված կանխավճարի կորստի տեսքով) և թե՛ կանգնեցնելով Ընկերությանը պետական գնումներին մասնակցելու իրավունքից զրկելու վտանգի առջև:»:

Ելնելով վերոնշված փաստերից ու փաստական հանգամանքներից՝ Մասնակիցը Բողոքներ քննող անձին խնդրել է «Նովա Թրեյդ» ՍՊԸ-ին չվերագրել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պայմանագրային պարտավորության խախտում, և վերջինիսի չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

4. <u>ՍՑ-LO-2021/243 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) և «Նովա թրեյդ» ՍՊԸ-ի միջև 28.07.2021թ.-ին կնքվել է թիվ «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-116/21-01/207» ծածկագրով պետական գնման պայմանագիր (այսուհետ նաև՝ Պայմանագիր):

ii. Պայմանագրի 1.1-րդ կետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով,

ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

iii. Պայմանագրի 2.1.1-րդ կետի համաձայն՝ ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

iv. Պայմանագրի հավելված 1-ով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ ապրանքների մատակարարումը պետք է իրականացվի պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից 30 օրացուցային օրվա ընթացքում:

v. www.gnumner.am համացանցային կայքում՝ «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում 08.09.2021թ.-ին հրապարակված Պայմանագրի միակողմանի լուծման մասին թիվ Ε/13/2370-21 ծանուցման համաձայն՝ «Հայկական ատոմային էլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերության կարիքների համար «գործիքային հատուկ հարմարանքներ» ապրանքների ձեռքբերման նպատակով ս/թ հունիսի 15-ին հրապարակված «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-116/21» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում «Նովա թրեյդ» ՍՊԸ-ի և «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի միջև 2021թ.-ի հուլիսի 28-ին կնքվել է թիվ «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-116/21-01/207» պայմանագիրը 14.949.000 (տասնչորս միլիոն ինը հարյուր քառասունինը հազար) ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ) ընդհանուր գնով: Պայմանագրով նախատեսված 2 հատ խողովակահատիչները «Նովա թրեյդ» ՍՊԸ-ի կողմից չեն մատակարարվել:

Համաձայն վերոհիշյալ պայմանագրի՝

2.4.1 կետի՝ «Վաճառողը պարտավոր է գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով»,

2.4.2 կետի՝ «Վաճառողը պարտավոր է ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում»,

2.4.4 կետի՝ «Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով»,

Հավելված 1-ի՝ «Վաճառողը պարտավոր է մատակարարումը իրականացնել պայմանագրի կնքման օրվանից 30 օրացուցային օրվա ընթացքում»:

Հիմք ընդունելով հիշյալ պայմանագրի 2.1 կետը, այն է՝ գնորդը իրավունք ունի՝

2.1.1 ապրանքը սահմանված ժամկետում վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի,

2.1.7 միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե էականորեն խախտվել է պայմանագիրը,

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրացուցային օրից ավելի:

Մասնակցին տեղեկացրել են, որ «ՀԱԷԿ» ՓԲԸ-ն միակողմանի լուծում է «Նովա թրեյդ» ՍՊԸ ի հետ 2021թ.-ի հուլիսի 28-ին կնքած «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-116/21» պայմանագիրը, ինչի մասին Ե/13/2342-21 առ 02.09.2021թ.-ի գրությամբ Պատվիրատուն տեղեկացրել է մատակարարման ժամկետների խախտման դեպքում պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 14.09.2021թ.-ի թիվ 26/26-1/14841-2021 գրությամբ «Նովա թրեյդ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը բաղկացած է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքից, սույն օրենքից և իրավական այլ ակտերից: Գնումների մասին իրավական այլ ակտերը հրապարակվում են նաև պաշտոնական տեղեկագրում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 352-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ եթե պարտավորությունը նախատեսում է կամ հնարավորություն է ընձեռում որոշել դրա օրը կամ ժամանակահատվածը, ապա պարտավորությունը պետք է կատարվի այդ օրը կամ այդ ժամանակահատվածի ցանկացած պահին: Այն դեպքերում, երբ պարտավորությունը կատարման ժամկետ չի նախատեսում և ժամկետի որոշման պայմաններ չի պարունակում, այն պետք է կատարվի պարտավորության ծագումից հետո՝ ողջամիտ ժամկետում:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ողջամիտ ժամկետում չկատարված պարտավորությունը, ինչպես նաև այն պարտավորությունը, որի կատարման ժամկետը որոշվում է պահանջի պահով, պարտապանը պարտավոր է կատարել այդ մասին պարտատիրոջ պահանջի ներկայացման օրվանից հետո՝ յոթնօրյա ժամկետում, եթե պարտավորության կատարման այլ ժամկետ չի բխում օրենքից, այլ իրավական ակտերից, պարտավորության պայմաններից, գործարար շրջանառության սովորույթներից կամ պարտավորության էությունից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար պատասխանատու է մեղքի առկայության դեպքում, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:

Օրենսգրքի 420-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, ապա դատարանը համապատասխանաբար նվազեցնում է պարտապանի պատասխանատվության չափը: Դատարանն իրավունք ունի նաև նվազեցնել պարտապանի պատասխանատվության չափը, եթե պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 1-ին կետի կանոնները համապատասխանաբար կիրառվում են նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Պայմանագրի 1.1-րդ կետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն՝ Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը:

Պայմանագրի 2.1.7.1 կետի համաձայն՝ Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում,

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

Վերոնշյալ հոդվածների համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ օրենսդիրն որպես պարտավորությունը խախտելու համար պատասխանատվության պարտադիր պայման սահմանել է պարտավորությունը խախտած անձի մեղքի առկայությունը: Պարտապանը պարտավորությունը անպատշաճ կատարելու համար չի կարող կրել պատասխանատվություն՝ մեղքի բացակայության պայմաններում: Ուստի, այն դեպքերում, երբ պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը խախտելու մեջ բացակայում է պարտապանի մեղավորությունը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել մասնակցի (պարտապանի)՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ավելին, եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, պարտապանի պատասխանատվության չափը պետք է նվազեցվի, ինչպես նաև այն դեպքերում, երբ պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար, ընդ որում, նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Սույն գործի փաստերի համաձայն՝ «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի և «Նովա թրեյդ» ՍՊԸ-ի միջև 28.07.2021թ.-ին կնքված թիվ «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-116/21-01/207» ծածկագրով պետական գնման պայմանագրի հավելված 1-ով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ ապրանքների մատակարարումը պետք է իրականացվի պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից 30 օրացուցային օրվա ընթացքում: www.gnumner.am համացանցային կայքում՝ «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում 08.09.2021թ.-ին հրապարակված Պայմանագրի միակողմանի լուծման մասին թիվ Ε/13/2370-21 ծանուցման համաձայն՝ «Հայկական ատոմային էլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերության կարիքների համար «գործիքային հատուկ հարմարանքներ» ապրանքների ձեռքբերման նպատակով ս/թ հունիսի 15-ին հրապարակված «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-116/21» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում «Նովա թրեյդ» ՍՊԸ-ի և «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի միջև 2021թ.-ի հուլիսի 28-ին կնքվել է թիվ «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-116/21-01/207» պայմանագիրը 14.949.000 (տասնչորս միլիոն ինը հարյուր քառասունինը հազար) ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ) ընդհանուր գնով: Պայմանագրով նախատեսված 2 հատ խողովակահատիչները «Նովա թրեյդ» ՍՊԸ-ի կողմից չեն մատակարարվել, ուստի «ՀԱԷԿ» ՓԲԸ-ն միակողմանի լուծում է «Նովա թրեյդ» ՍՊԸ ի հետ 2021թ.-ի հուլիսի 28-ին կնքած «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-116/21» պայմանագիրը, ինչի մասին Ε/13/2342-21 առ 02.09.2021թ.-ի գրությամբ Պատվիրատուն տեղեկացրել է մատակարարման ժամկետների խախտման դեպքում պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ տվյալ դեպքում, «Նովա թրեյդ» ՍՊԸ-ի կողմից դրսևորած անգործության արդյունքում, Պատվիրատուն, հիմք ընդունելով Պայմանագրի դրույթները, միակողմանի 08.09.2021թ.-ին լուծել է այն՝ www.gnumner.am համացանցային

կայքում՝ «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում 08.09.2021թ.-ին հրապարակելով պայմանագրի միակողմանի լուծման մասին ծանուցումը:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 33-րդ կետի 17-րդ ենթակետի համաձայն՝ պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Պայմանագիր կնքած անձը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը ուղարկվում է նաև պայմանագիր կնքած անձի էլեկտրոնային փոստին:

Նշված իրավանորմերի վերլուծության հիման վրա՝ Բողոքներ քննող անձը եզրահանգում է, որ Օրենսդիրը մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար նախատեսել է սպառիչ պայմաններ, որոնք են պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունների խախտումը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպես ընտրված մասնակից

պայմանագիր կնքելուց հրաժարվելը և հայտերը բացելուց հետո գնման գործընթացին հետագա մասնակցությունից հրաժարվել: Այսինքն՝ միայն սույն դեպքերում է հնարավոր մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Նովա թրեյդ» ՍՊԸ-ն խախտել է պայմանագրով նախատեսված և դրա շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:

Ուստի, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի դրույթները, Մասնակցին պետք է ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 14.09.2021թ.-ի թիվ 26/26-1/14841-2021 գրությամբ «Նովա թրեյդ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2021/243 ծածկագրով ընթացակարգը բավարարել:

2. «Նովա թրեյդ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**